

կոս առեր են իրաւագուր' Քրիստոնեայ ազգերէն, առանձնապէս Հայերէ :

Միջնադարւան Հայ պատմիչներու սխալ հասկացողութեամբ, Քիւրդերը նոյնացեր են Մարերու (Մատ. Մեդ. Մեդագի)ի հետ (*), և մենք ալ նոյն սխալը մինչեւ այսօր կը կրկնենք : Քիւրդերը նոյնքան Մար՝ որքան Պարսիկ, այսինքն ոչ մէկը և ոչ միւսը, այլ երեքն ալ ուրիշ բազմաթիւ տոհմերու հետ կը պատկանին Իրանի բարձրաւանդակի Արիններուն :

Հետաքրքիր է Քիւրդ պատմագէտների կարծիքները. անոնցմէ մէկը (Թիւրքիոյ ղինուրական ծառայութեան մէջ Հիւսէյն փաշայի որդի գնդապետ Սիւլէյման պէյ), Քիւրդերու ծագման ու կազմութեան մասին այսպէս կը մեկնարանէր.

Գեուրդ կը նշանակէ ըմբիշ (փէշլիվան). Քիւրդերի հին անունը Լօռ (**) է, որ նոյնպէս կը նշանակէ ըմբիշ (փէշլիվան) : Այժմեայ Քիւրդերը և Լօռիստանի բնակիչները կը վիճեն իրենց ծագումի վրայ, և ամեն մէկը ըմբիշ (փէշլիվան) անունը կը վերադրէ իրեն : Լօռիստանի մէջ այժմ Լօռ անունը այլ ևւս չի գործածուիր, անոր յաջորդել է Փէշլիվան անուն : Կարծիք կայ, որ Քիւրդերը և այժմեայ Լօռիստանի բնակիչները վնին մի և նոյն ծագում ունեցող ցեղեր : (***)

Շէյխ Ուպէյտուլլահի որդի Շէյխ Ապտիւլ Գասիրի ըսելով, Քիւրդերը կը սերին Հայերէ, Ասորիներէ և Ֆարսերէ, անոնց հին լեզուն Փէշլէվի է (պահլա) :

Գանկաբանական հետազոտքիւն. — Էլիզէ Բըքիւ, իր «Nouvelle Géographie Universelle»-ի 345 երեսին մէջ կ'ըսէ :

(*) Այս մասին հակասութիւն մը կը տեսնուի Ա. Խաչատուրեանի իր իսկ յայտնած կարծիքներու մէջ :

(**) Տես գրքիս Բ. մաս «Յաւելում» հատուածի Էլիզէ-Բըքիւի Քիւրդերու վիճակագրութիւնը, Լինչի «Քիւրդերու ներկայ աշխարհագր. դաստորութիւն» կտորին մէջ, Էնչպէս և ուրիշ տեղեր :

(***) Տես գրքիս վերջը՝ «Քիւրդերու ներկայ աշխարհագրական դաստորութիւնը» հատուածը :